

տաւոր կամ բարեկամական ընթացք մը ունենալէ: Ընդհակառակը, ան անոնց հակառակ դուրս եկաւ՝ անխտիր միջոցներով ջանալով հրապարակը խել Հայ մետաքսի վաճառականներուն ձեռքէն, առանց, սակայն, դադարելու օգտուելի Հայոց բարեկամութենէն:

Էլթընի եւ ընկերակցին կողմէ մեզի թողուած է շահեկան ուղեգրութիւն մը, ամփոփի եւ համառօտ, որմէ երկարօրէն օգտուած է Հանուէյ իր երկհատոր գործին մէջ: Քանի մը տարի առաջ Անգլիացի գրաւաճառ մը ինձ հայթայթեց փոքր բարակ ութածալ հատոր մը, մեծապէս հաղուազիւտ, 1742-ին Լոնտոն հրատարակուած, որ Պարսկաստան կատարուած ուղեգրութիւն մըն էր: Թէեւ հեղինակին անունը կը պակսի հատորին ճակատին, սակայն աշխատութիւնը նոյնիսկ ճան էլթընի եւ Մունկօ Կրաէմի ընկերոջ ուղեգրութիւնն է:

1738 Մարտ 14-ին ան Մոսկուայէն ճամբայ կ'ելլայ եւ Ապրիլ 15-ին կը հասնի Սարաթով, ուր «Հայերու խումբը, որոնք հոս գտնալ մեծապէս կը յուսայինք, ասկէ երկու օր առաջ արդէն նաւած էին: Այնպէս որ, մեզի ուրիշ բան ընել չմնաց, բացի առանձին նաւել Վոլկան ի վար»: Յուսալով որ ժամ առաջ կը հասնի Աստրախան՝ հոն Կասպիցը նաւելու համար Հայոց հետ նոյն նաւին մէջ: Մայիս 4-ին կը հասնի Աստրախան եւ կը գտնայ Հայ վաճառականներու խումբը, որոնց կ'ուզէր միանալ ճամբորդելու նպատակաւ: Մինչ ան հոն կը սպասէր մեկնման, «Ընդ որով ալ ժամանակը ունէինք ինչպիսիքս ծանօթացնելու Պարսկաստանի առեւտուրով, թէ ինչպէս ան յառաջ էլ ապրուելու Ռուսերուն, ինչպէս եւ Հայերուն միջոցաւ: Մենք գտանք, որ վերջինները շատ խորամանկ էին մեզի ծանօթութիւն տալուն մէջ: Անոնք կը վախնային, որ մենք եկած էինք իրենց շահակից ըլլալու, այնպէս որ մենք լաւ չէինք վստահեր անոնց մեզի ըսածներուն: Ըստ անոնց, ասկէ առաջ Աստրախանէն դէպի Պարսկաստան բաց եւ ազատ էր, եւ օտար վաճառականները, որոնք Պարսկաստան ապրանք կը ներածէին, կրնային իրենց ցանկացած շուկաները տանիլ եւ վաճառել անոնց, որ կը փափաքէին: Սակայն, այս տարի

բոլոր ապրանքները, որոնք Ռէշտ կը հասնին, պէտք է որ հոն ծախուին: Ծահը թոյլ չի տար ոչ ոքի դանոնք գնել, բացի իր վաճառականներէն, որովհետեւ թէեւ կրնան իրենց ապրանքը (ներածող վաճառականները) պահել, եթէ Ծահին վաճառականներուն գիները ցանկալի չեն գտնար, եւ, սակայն, որեւէ ուրիշ հրապարակ տանիլ չեն կրնար, ինչպէս եւ վաճառել ուրիշներու: Նաեւ Ծահը իրեն վերապահած է բոլոր հում մետաքսը, այնպէս որ անոնք որ հում մետաքս կ'ուզեն գնել, պէտք է գնեն իր վաճառականներէն եւ ոչ թէ Պարսիկ գիւղացիներէն, որպէս նախապէս կը կատարուէր:

«Նոյնպէս մեզի հաւաստուեցաւ Զուղայեցի Հայերէ, թէ Անգլիական Արեւելեան Ընկ. գործակատարները մեկնած էին Սպահանէն՝ այդ քաղաքէն հեռանալ բռնադատուելով Նատիր Ծահին տուած մասնաւոր հրամանով, որուն ղեղոհութիւնը շահած էին կերպով մը: Այս (Զուղայեցի) Հայերը այդ ազգին ամենամեծ առեւտրականներն են, եւ անոնք են որ մեծ առեւտուր կ'ընեն Ռուսիոյ վրայով Ամբղերտամի հետ: Ասկէ դատ անոնք ըսին, թէ ճիշդ է որ Լէզղիները կամ լեռնային Թաթարները Ծիրվանի դաւառի ապստամբած էին Նատիր Ծահի դէմ: Անոնք պաշարած էին իր եղբայրը եւ իր դօրաց մեծ մասը, որոնք զրկուած էին զիրենք նուաճելու: Բայց այս ապստամբութիւնը Գիրանի նահանգին առեւտուրը չէր ընդմիջեր»:

Հետաքրքրական է, որ էլթըն չի վստահիր Հայոց ըսածներուն: Անոնք կը կասկածին եղեր իրմէ, սակայն նոյն առեւտուրը տեղեկութիւններ կուտան իրեն: Արդ՝ կրնանք խորհիլ, որ Հայ վաճառականները կապուած էին ընկերական կապերով, ունէին ինքնապաշտպանութեան միջոցներ, տեղեկատու կազմակերպութիւն, որուն չնորհիւ կը հակադէմն օտար թափանցմանց դէմ, կը պայքարէին անոնց հանդէպ, եթէ նոյնիսկ էլթընի այցելութեան նման անմեղ երեւոյթով իսկ ըլլային այդ թափանցումները: Որոշ է, որ կար հայ առեւտրական լրտեսական կազմակերպութիւն:

Էլթըն պիտի շարունակէ մեզի տալ յաւել-